

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

anna_arevshatyan@hotmail.com

ORCID iD: 0000-0001-7578-8275

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-562

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բանալի բառեր - Ավետիք Իսահակյան, Տիգրան Մանսուրյան, պոեզիա, երաժշտություն, վոկալ-գործիքային շարքեր, խմբերգեր:

Ամփոփում

Ավետիք Իսահակյանի պոեզիան առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայ ականավոր կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի ստեղծագործության մեջ: Նա բազմիցս է դիմել մեծ բանաստեղծի երկերին: Հոգևածում առաջին անգամ քննվում են Ավետիք Իսահակյանի պոեզիայի հիման վրա Տիգրան Մանսուրյանի ստեղծած գործերը: Վերլուծության նյութ են դարձել ինչպես Ավ. Իսահակյանի խոսքերով գրված կամերային վոկալ-գործիքային երկերը, այնպես էլ՝ վեց խմբերգերը a cappella խառը երգչախմբի համար: Այդ գործերը աչքի են ընկնում իսահակյանական քնարերգության խորաթափանց, ճշգրիտ մեկնաբանմամբ և դասելի են հայ նորագույն վոկալ-կամերային և խմբերգային երաժշտության նշանակալի ձեռքբերումների շարքին:

ANNA AREVSHATYAN

Doctor of Sciences (Arts), Professor

Institute of Arts of the NAS RA

anna_arevshatyan@hotmail.com

ORCID iD: 0000-0001-7578-8275

AVETIK ISAHAKYAN'S POETRY IN TIGRAN MANSURIAN'S WORK

Keywords: Avetik Isahakyan, Tigran Mansurian, poetry, music, vocal chamber cycles, choral works.

Abstract

Avetik Isahakyan's poetry occupies a special place in the work of the prominent Armenian composer Tigran Mansurian. He has repeatedly turned to the works of the great poet. The article examines for the first time the works created by Tigran Mansurian based on Avetik Isahakyan's poetry. The subject of analysis is both the chamber vocal-instrumental works written to Av. Isahakyan's words, as well as the six chorales for a cappella mixed choir. These works stand out for their insightful, precise interpretation of Isahakyan's lyrics and are among the significant achievements of modern Armenian vocal-chamber and choral music.

АННА АРЕВШАТЯН

Доктор искусствоведения, профессор

Институт искусств НАН РА

anna_arevshatyan@hotmail.com

ORCID iD: 0000-0001-7578-8275

ПОЭЗИЯ АВЕТИКА ИСААКЯНА В ТВОРЧЕСТВЕ ТИГРАНА МАНСУРЯНА

Ключевые слова: Аветик Исаакян, Тигран Мансурян, поэзия, музыка, вокально-камерные циклы, хоровые сочинения.

Аннотация

Поэзия Аветика Исаакяна занимает особое место в творчестве выдающегося армянского композитора Тиграна Мансуряна. Он неоднократно обращался к творчеству великого поэта. В статье впервые рассматриваются произведения, созданные Тиграном Мансуряном на основе поэзии Аветика Исаакяна. Предметом анализа являются как камерные вокально-инструментальные произведения, написанные на слова Ав. Исаакяна, так и хоровой цикл для смешанного хора а cappella. Эти произведения выделяются своей проникновенной, точной интерпретацией лирики Исаакяна и относятся к числу значительных достижений современной армянской вокально-камерной и хоровой музыки.

Ներածություն

Ավետիք Իսահակյանի պոեզիան ոգեշնչել է հայ կոմպոզիտորներից շատերին: Տիգրան Մանսուրյանը՝ այսօրվա միջազգայնորեն ամենահայտնի հայ կոմպոզիտորը, ով հեղինակ է տարբեր ժանրերի պատկանող մի շարք նշանակալի երկերի, բազմիցս է դիմել Իսահակյանի բանաստեղծությանը՝ կերտելով վոկալ-գործիքային և խմբերգային երկեր, որոնք լայն արձագանք են ստացել մասնագետների և երաժշտասերների միջավայրում, արժանացել առաջատար երաժիշտ-կատարողների ուշադրությանն ու մեկնաբանմանը:

Չափազանց ընդգրկուն են Մանսուրյանի բանաստեղծական նախասիրությունները՝ Մաշտոցից և Ներսես Շնորհալուց մինչև Չարենց, Կոստան Զարյան, Համո Սահյան ու Ռազմիկ Դավոյան, Դանթեից մինչև Գարսիա Լորկա և Վլադիմիր Հոլան, միջնադարյան հայրեններ և ժողովրդական աղոթքներ: Սակայն Ավ. Իսահակյանի պոեզիան իր առանձնահատուկ տեղն ունի կոմպոզիտորի ստեղծագործության մեջ:

Տիգրան Մանսուրյանը շատ վաղ է կապվել գրականության, հատկապես, հայ գրականության և պոեզիայի հետ: Պատանեկության և երիտասարդության տարիներին բանաստեղծություններ է գրել, ինչից հետագայում հրաժարվել է՝ զգալով, որ իրենը երաժշտությունն է: Սակայն ջերմ սերը գրականության, բանաստեղծության հանդեպ պահպանվեց ողջ կյանքում, ինչը տվեց իր պտուղները, մասնավորապես, հայ բանաստեղծների խոսքերով ստեղծված վոկալ-գործիքային շարքերում և խմբերգային կտավներում:

Տ. Մանսուրյանի՝ Ավ. Իսահակյանի խոսքերով գրված վոկալ-գործիքային երկերը

2007–2008 թթ. ստեղծված «Զուգահեռ երգեր» շարքը կոմպոզիտորի վոկալ ժանրի նշանակալի գործերից է (Արևշատյան 2025: 41-54): Այն ամենածավալունն է Մանսուրյանի վոկալ-գործիքային շարքերի մեջ՝ ընդգրկելով ութ մաս: Շարքն ունի երկու տարբերակ՝ ձայնի ու դաշնամուրի և ձայնի, դաշնամուրի ու լարային նվագախմբի համար: Շարքի վերնագրի և մտահղացման գաղափարը սերում է Պլուտարքոսի «Զուգահեռ (կամ համեմատական) կենսագրություններ»

(Βίοι Παράλληλοι) հայտնի երկից, որի մեջ զույգ-զույգ ներկայացվող հերոսները (հույն և հռոմեացի զորավարներ, քաղաքական գործիչներ, փիլիսոփաներ) նկարագրվում են՝ կարծես մեկը մյուսին և՛ հակադրվելով, և՛ իրար լրացնելով:

«Ջուգահեռ երգեր» երգաշարում զետեղված են 4 բանաստեղծների 2-ական գործեր. Պաղտասար Դպիրի «Տաղ կորուսեալ սիրելոյ» և «Վասն սիրոյ», Ե. Չարենցի «Կապույտ լճի վրա» ու «Եվ մի իրիկուն», Ավ. Իսահակյանի «Իմ հոգին» և «Լեռների վրա ծյունել է», Վ. Տերյանի «Աշնան երգ» և «Իմ խաղաղ երեկոն»: Այդ երգերը, ոճական ու ելևէջային ներդաշնակ ամբողջություն կազմելով, միավորված են ընդհանուր խոհաքնարական տրամադրությամբ և բովանդակությամբ: Դրանք կորցրած սիրո, թախծի, կյանքի անցողիկության և իմաստի մասին մտորման մի պատում են ներկայացնում, որը հիմքում կապված է կոմպոզիտորի կնոջ կորստի հետ: Այստեղից էլ՝ «Ջուգահեռ երգեր» կամ իտալերեն՝ «Canti paralleli» անվանումը, որն ակնարկում է տարբեր բանաստեղծների պոեզիայում առկա ընդհանուր, նմանատիպ տրամադրությունները՝ թվում է, թե առանց նկատելի հակադրությունների, ինչը սպասելի էր ութ երգից բաղկացած շարքում, սակայն ներքին դրամատիկ և քնարական շեշտադրումներով:

«Ջուգահեռ երգեր» շարքին հատուկ է նրբագեղ հնչյունային մթնոլորտը՝ բանաստեղծական խոսքի և երաժշտական ելևէջի ներդաշնակ զուգորդումը, ժամանակի և տարածության յուրօրինակ վերապրումը:

Սկզբնական՝ ծայնի և դաշնամուրի համար տարբերակում, երգային հիմքից եկող ելևէջային նկարագիրը բնորոշում է վոկալ երգամասի բնույթը, ի տարբերություն կոմպոզիտորի մի քանի մյուս վոկալ շարքերի, որոնցում գերիշխում է ասերգային հիմքը: Միաժամանակ այստեղ շատ ինքուրույն է դաշնամուրի նվագամասը, որը կրում է արտահայտչական և՛ լրացնող, և՛ ինքնաբավ գործառույթ: Ակամա հիշում ես տակավին երիտասարդ Արամ Խաչատրյանի՝ Հարո Ստեփանյանին ուղղված նամակում արտահայտած միտքը. «Ես կարծում եմ, որ ռոմանսի մեջ դաշնամուրի պարտիան այնքան ինքնուրույն պիտի լինի, որ գոյություն ունենա համարյա որպես դաշնամուրային

պրեյյուդ: <...> Բայց միաժամանակ ձայնի պարտիան պիտի լինի վառ ու տիրական» (Խաչատրյան 2017: 7): Պետք է նշել, որ դաշնամուրային նվագամասին վերաբերող նման մոտեցումը բնորոշ է Մանսուրյանի վոկալ-գործիքային շարքերի մեծամասնությանը:

«Զուգահեռ երգերի»-ի մի քանի մասերում դաշնամուրային նվագամասը հենց պրոպիսին է: Դա ցայտուն կերպով դրսևորվել է նաև Իսահակյանի խոսքերով գրված «Իմ հոգին տարագիր մի թռչուն» և «Լեռների վրա ձյունել է» շարքի 5-րդ և 6-րդ մասերը կազմող երգերում (Տես նոտային օրինակ 1 և 2):

Օրինակ 1 «Իմ հոգին»

Իմ հոգին
My Soul
(Ավետիք Բասիսյան / Avetik Isahakyan)

Canto

Piano

4/p Con fuoco

f

3

5

7

10 *mf*

Իսկ հո - գին սուսու-գիր մի թըր - չուն՝ Միր - ըր -
 Im ho - qin ta - ra - gir mi tər - chun, Mər - rə -

13

կով զար - ըր - վաժ, թե - վա - թափ.
 kov zar - nə - vatz, te - va - tap;

Ավ. Իսահակյանի խոսքերով երգերը շարքի դրամատիկական գազաթն են: Դրանք կոնտրաստային են տրամադրության առումով. առաջինը ներքին խռովք և տառապանք է արտահայտում, իսկ 2-րդը՝ հայեցում և խոհականություն:

Օրինակ 2 «Լեռների վրա ձյունել է»

Լեռների վրա ձյունել է
It has Snowed on the Mountains
(Իսահակյան / Isahakyan)

4 *Lento e tranquillo*

Canto

p

Օւ-ռի-րի վը - րա ա - շու - նի դա - լուկ, դա - լուկ,
Tza-re - ri vò - ra a - shu - nà da - luk, da - luk,

Piano

p

poco

mp

Հըժ-ծուս է մեղ - միկ մի դի - դին ին-վագ՝ Ժախ-
Hotz - tzum e megh-mik mi de - ghin na - vag, Takh-

p

ձյուն նւ - նիւ՛ն, ա - նիւ՛ն, Լեռ-նի վը -
tzot u a - nush, a - nush, Ler-ne - ri vò -

«Ձուգահեռ երգեր»-ի ձայնագրության խտասալիկի կապակցությամբ “ResMusica” հեղինակավոր հանդեսը «Տիգրան Մանսուրյանի կորցրած դրախտի կարոտախառը» խոսուն վերնագրով հոդվածում գրել է. «Այս երաժշտությունը, որը ձայնագրվել է որպես Brilliant Classics-ի համաշխարհային պրեմիերա, ավանդույթի և արդիականության միջև հստակ հավասարակշռություն է ներկայացնում» (Saulneron 2017:15nov.):

Ձայնի, դաշնամուրի և լարային նվագախմբի համար նախատեսված տարբերակը (2012) նոր երանգներ և հնչյունային ծավալ է հաղորդել ստեղծագործությանը՝ օժտելով՝ մեներգային կանտատի զգեստով: Ավելի լավ հասկանալու համար կոմպոզիտորի՝ Իսահակյանի պոեզիայի ընկալումը, մեջբերեմ նրա խոսքը 2012 թ. «Նարեկացի» արվեստի միության դահլիճում կայացած «Ձուգահեռ երգերի» առաջնանվագի կապակցությամբ տեղի ունեցած հանդիպման ընթացքում. «Երբ մենք փորձում ենք երգել, օրինակ, մի բանաստեղծ, որը ժողովրդական ակունքներին շատ մոտ է, մենք, անշուշտ, առաջին հերթին վստահում ենք այն երաժշտական մտածողությանը, որն անմիջապես ժողովրդի երգածն է: Փոքր քաղաքն է, արհեստավորական քաղաքն է, այդտեղի մեծ բանաստեղծն է, որը կարող է Արագածի ճամփով աստղերին հասնել, տիեզերական չափումների մեջ գտնվել (...), բայց զգայական համակարգը, սիմվոլների համակարգը իրավոր արևելյան արտահայտություններից է անմիջապես բխում, որը նաև շատ կապված է բանահյուսության հետ, կարծես, անմիջապես բանահյուսական արվեստ է, ինչպես «Մաճկալը», «Բինգյուլը» և այս կարգի երգերը: Երբ Արամ Խաչատրյանը իր Երկրորդ սիմֆոնիայի մոնումենտալ սգո քայլերգը ստեղծում է Իսահակյանի «Որսկան ախպեր» երգի մեղեդու հիմքի վրա, ուրեմն, սրանք երգեր են, որոնց պոտենցիալ հնարավորությունները չափազանց մեծ են, ինչպես միջնադարյան հայ մանրանկարչության մեջ պարփակված ներքին մոնումենտալությունը: Իսահակյանի ապրված, իսկապես ապրված ժողովրդական երգերի մեջ իր բանաստեղծական ոգին է: Բայց այնուամենայնիվ փորձում ես քայլ անել: Քանիեորդ բանաստեղծությունն եմ անում Իսահակյանի հետ... Ես ինձ թույլ տվեցի մտածել, - շարունա-

կում է մատուցում, - իսկ արդյոք հնարավոր չէ՞ Իսահակյանին կարգալ ուրիշ երաժշտական լեզվական համակարգի մեջ: Օրինակ՝ այնպիսի մի իրականություն ստեղծել, որ կարծես թե գալիս է հոգևոր երաժշտական մտածողությունից, հոգևոր երաժշտությունից: Իսահակյանը այդ հնարավորությունը տալիս է, այսպես ասած, իր խորքերի կրակով, ոչ արտաքին կրակով: (...) Իր ալիքները, իր շարժումները տակն են: Եվ բնական է, որ երբեմն ուշ տարիքում են հասնում Իսահակյանին, որովհետև այս իմաստությունն է պետք կուտակել և առհասարակ այս հանդարտությանը գալ կամ այնպիսի անհանդարտությանը, որն արտաքուստ կարծես թե այլևս իմաստություն է եկել, բայց և՛ հարցերը, և՛ հուզումները շատ ավելի խորքային են»:

Հետագա տարիներին կոմպոզիտորը նորից է անդրադարձել Իսահակյանի պոեզիային՝ ստեղծելով մի շարք մեներգեր, որոնցում հավատարիմ է մնացել իր նախասիրած ասերգայինի ու բուն երգայինի զուգորդմանը և գործիքային նվագակցության թափանցիկ ու նրբագեղ նկարագրին: Դրանցից կարելի է նշել, օրինակ, Ղազարոս Սարյանի հիշատակին նվիրված «Կեռասենին ծաղկեց կրկին» և «Նորեկ գարունքին» «Գարնան երկու երգ»-ը, դարձյալ Ավ. Իսահակյանի խոսքերով «Գիշերերգը», «Լուռ է ու խավար», «Վերջին հորձանք իմ ցնորքի» երգերը մեցո սոպրանոյի, ալտի և դաշնամուրի համար (2016, 2018): Եվ դարձյալ Իսահակյանի խոսքերով վերջերս գրված «Հայրենի ծուխը» բարիտոնի և դաշնամուրի համար (2024), գործ, որն իր ներքին երեք ենթաբաժիններ ընդգրկող ծավալով և շարադրանքի բնույթով մոտենում է բալլադի ժանրին: Վերոնշյալ գործերում դրսևորվել են կամերային երգի ժանրում հեղինակի տարիների փորձն ամբարած ողջ վարպետությունը և յուրաքանչյուր հնչյունի նկատմամբ արտահայտած նրբագագցությունն ու ապրումների խորությունը: 2018 թ. Վարպետի տուն-թանգարանում «Գարնան երկու երգերի» կատարմանը նախորդող իր ելույթի ընթացքին Մանսուրյանը, անդրադարձալով Իսահակյանի բանաստեղծությանը, ասել է. «Շատ սիրում եմ իր տաղաչափությունը, արտակարգ: Իր հնչողությունների համակարգը՝ բաղաձայների, ձայնավորների: Խենթանալու մի ներդաշնակական աշխարհ: Գիտեք, պետք է երաժիշտ լինես

հատկապես, որ ամբողջ խորքով ապրես այդ ֆոնետիկան, այդ հնչյունաբանությունը բանաստեղծության: Ընթերցողին տանում է իմաստը, բայց երաժշտին՝ նաև այդ տաղաչափությունը, այսինքն, ինչպես է ռիթմը գոյանում տողերի մեջ, իսկ հետո՝ հնչյունների կյանքը: Դա աներևակայելի հետաքրքիր է, հարուստ աշխարհ է երաժշտի համար»:

Տիգրան Մանսուրյանի վեց խմբերգը Ավ. Իսահակյանի խոսքերով

Հայտնի է, որ խմբերգային արվեստը Տիգրան Մանսուրյանին գրավել է դեռևս երիտասարդ տարիքից: Իր բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում նա կերտել է խմբերգային շատ նշանակալի երկեր: Դրանք շարքեր են a cappella երգչախմբերի համար («Երեք ասացված» Կ. Ջառյանի խոսքերով, «Ars poetica» խմբերգային կոնցերտը ըստ Ե. Չարենցի 10 բանաստեղծությունների, վեց խմբերգ Ավ. Իսահակյանի խոսքերով, «Գարնան երգեր» Հ. Թումանյանի խոսքերով, «Հայրեններ սիրո, պանդխտության և լուսնյակ գիշերների»), ինչպես և վոկալ-սիմֆոնիկ երկեր մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար («Requiem»-ը, «Հավատով խոստովանիմ»-ի երկրորդ տեսողը, «Քավարան», «Օրհներգ 1- Նավապետ բարի» կանտատները): Վերոնշյալ երկերում (ինչպես խմբերգային, այնպես էլ վոկալ-կամերային), Տ. Մանսուրյանը ներկայանում է որպես հայ բանաստեղծների պոեզիայի էությունը բացահայտող, հայոց լեզվի իմաստաբանությունը, հնչականության գեղեցկությունն ու հարուստ արտահայտչականությունը հիանալի զգացող և վերարտադրող երաժիշտ-քնարերգու (Արևշատյան 2025: 55-87): Այդ խմբերգերը աչքի են ընկնում երգչախմբի բազմաձայն ներկայանակի լայնածավալ ողջ ընդգրկումով և հնչյունային երանգավորման բազմազանությամբ:

Տիգրան Մանսուրյանի՝ Ավետիք Իսահակյանի խոսքերով վեց խմբերգերից բաղկացած շարքը (2003) գերում է ունկնդրին իր հիրավի բնապաշտական աշխարհընկալումով և ապրումներով, ներդաշնակման տարածական ծավալի իմպրեսիոնիստական գունագեղությամբ: «Ծով», «Դավեննայում», «Արևելքի հավքը», «Սև մութ ամպեր», «Ալագյազը աստղերի մեջ», «Ալագյազի լանջերում»՝ խմբերգերից

ամեն մեկը գրավում է վարպետորեն կիրառված երգչախմբային արտահայտչամիջոցների ողջ ներկայանակի հարստությամբ: Այդ խմբերգերի կապակցությամբ կոմպոզիտորն ասել է. «Վեց խմբերգեր եմ արել, դրանք հոգևոր և աշխարհիկ ելևէջների միջից եմ ընդհանրացրել, բայց ոչ աշուղական կամ փոքր գավառական քաղաքի երգեցողությունից, այլ հոգևոր»:

Կոմպոզիտորը պատմում է, որ խմբերգային շարքի առաջին մասի հնչյունային կայացման մեջ արտահայտվել են ծովի հետ կապված մանկական հիշողությունները՝ Բեյրութում անցկացրած տարիներից: Հաճախ ապագա կոմպոզիտորը հմայվել է ծովային տարերքի գեղեցկությամբ, ալեկոծ ծովի հզոր ալիքների բախումով մերձափնյա ժայռերին: Տարիներ անց այդ տպավորության տակ գրվեց իսահակյանական շարքի «Ծովը», որի համատեղված երկու սեպտակորդներից (des-f-as-c / f-as-c'-es') բաղկացած առաջին իսկ *ff* բազմահնչյուն ակորդը ունկնդրին փոխանցում է մշտական շարժման մեջ գտնվող ծովի ալիքի այդ հուժկու հարվածի անմիջական զգացողությունը (օրինակ 3):

Օրինակ 3 «Ծով»

Senza tempo
ff lunga

Allegro moderato, tempestoso e poco rubato
poco p

Soprani I
Ճով,
Tsov,
li - lya li uq - qbp li pn շա - ու - ին խառ - նե -
ye kan az - ger yev qo sha - rra - chin kharr - ne -

Soprani II

Alt I
Ճով,
Tsov,
li - lya li uq - qbp li pn շա - ու - ին խառ - նե -
ye kan az - ger yev qo sha - rra - chin kharr - ne -

Alt II

Tenori I
Ծով,
Tsov,
ն - կան ազ - գեր ն թո շա - նա - չին խառ - նն -
ye - kan az - ger yev qo sha - rra - chin kharr - ne -

Tenori II

Bassi I
Ծով,
Tsov,
ն - կան ազ - գեր ն թո շա - նա - չին խառ - նն -
ye - kan az - ger yev qo sha - rra - chin kharr - ne -

Bassi II

«Ծով»-ի թանձր, կարծես խոշոր վրձնահարվածներով կերտած հնչողությանը հակադրվում է երկրորդ՝ «Ռավեննայում» խմբերգի մեջ գերակշռող մեղեդիական մոնոդիկ գծային շարադրանքը, որն ուղեկցվում է մյուս ծայների ժլատ ընկերակցությամբ (օրինակ 4): Իր ելևէջային նկարագրով տվյալ խմբերգը հիշեցնում է շարականների մեղսը: Միաժամանակ այն աղերսվում է Կոմիտասի խմբերգային բազմաձայն մտածողությանը՝ կարծես կամար կապելով Մանսուրյանի վաղ շրջանի խմբերգային գործերի, մասնավորապես, Կոստան Զարյանի խոսքերով գրված «Երեք ասացվածի» հետ:

Օրինակ 4 «Ռավեննայում»

Alti
mp
Ա - րա - րա - րի ծնր կա - վա -
A - ra - ra - ti tser ka - ta -

Bassi
mp
Ա - րա - րա - րի ծնր կա - վա - րին
A - ra - ra - ti tser ka - ta - rin

A. phlu rin

B. tser ka - ta - rin

A. *mp* dar e li - kel.

T. dar e ye - kel. vayr - kya - ni pes u an - gnel. tzel.

B. dar e ye - kel.

poco

Նույն սկզբունքները պահպանվում են շարքի մնացած մասերում, որտեղ միաձայն մեղեդիական ֆրագմենտները զուգորդվում են բազմահնչյուն նրբագեղ շարադրանքի հետ: Հայրենի բնության, կյանքի իմաստի և մահվան մասին իսահակյանական պոեզիայում արտահայտված տրամադրությունները Մանսուրյանի շարքում ստացել են երազկոտ, երբեմն թախծոտ, բայց շատ լուսավոր և ցայտուն մարմնավորում: Իսկ վեց խմբերգերից վերջինը՝ խորալային բնույթ ունեցող «Ալազյազի լանջերում» խմբերգն ստացել է նաև ինքնուրույն կյանք՝ հիմք դառնալով լարային քառյակի համար գրված «Կտակ» խորագրով երկի²: Իսահակյանի խոսքերով խմբերգերի կապակցությամբ կարևոր դիտարկում է արել երաժշտագետ Ա. Ավանեսովը՝ նշելով. «Այս շարքը գրված է Մանսուրյանի երաժշտության նոր շրջանում, երբ կոմպոզիտորը աստիճանաբար հետևողականորեն վերացնում է վոկալ և գործիքային երաժշտության միջև ընկած պատնեշը. գործիքայինը դառնում է ավելի երգեցիկ քան երբևէ, իսկ վոկալը՝ զուսպ ու

² Ավելի ուշ կոմպոզիտորը Իսահակյանի խոսքերով այդ վեց խմբերգերին հավելել է եւս մեկը, որը շարքի վերջնական տարբերակում զբաղեցրել է նախավերջին տեղը:

գծային, նմանվելով գործիքային խիստ գրելաձևի նուրբ «կալիգրաֆիկ» ժեստերի»³:

Եզրակացություն

Այսպիսով՝ Իսահակյանի պոեզիային դիմելը Տիգրան Մանսուրյանի ստեղծագործության մեջ, ի տարբերություն հայ մյուս բանաստեղծների (Չարենց, Թումանյան և ուրիշներ), տեղի է ունեցել ավելի ուշ՝ դրսևորելով կոմպոզիտորի հասուն շրջանին բնորոշ երաժշտական լեզվի ու մտածողության նոր որակ և ուղղվածություն:

Իսահակյանական խմբերգերը դասելի են Տիգրան Մանսուրյանի ստեղծած խմբերգային մյուս գլուխգործոցների շարքին՝ «Արուեստ քերթողական» խմբերգային կոնցերտ, «Ռեքվիեմ», «Ես իմ անուշ Հայաստանի»՝ դառնալով հայ նորագույն խմբերգային երաժշտության նշանակալի ձեռքբերում, գեղարվեստական բարձր արժանիքներով օժտված ինքնատիպ երևույթ: Այդ գործերը աչքի են ընկնում իսահակյանական քնարերգության խորաթափանց, նուրբ և ճշգրիտ մեկնաբանմամբ՝ օրգանապես միահյուսվելով կոմպոզիտորի ուրույն երաժշտալեզվին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. **Արևշատյան Ա.** Տիգրան Մանսուրյան, Երևան, «Գիտություն», 2025, 224 էջ:
2. **Խաչատրյան Ա.** Նամականի: Կազմող՝ Ա.Գրիգորյան, ծանոթագրությունները՝ Ա. Շահմանյանի: Երևան, 2017, 510 էջ:
3. **Տիգրան Մանսուրյան**, խմբերգեր. Առաջաբանը և խմբագրումը Ա.Ավանեսովի, Երևան, «Ամրոց գրուպ», 2013, 176 էջ:
4. **Տիգրան Մանսուրյան**, Մեներգեր, Առաջաբանը և խմբագրումը Ա. Ավանեսովի, Երևան, «Կողբ» հիմնադրամ, 2024, 232 էջ:

Ամսագրեր

5. **Saulneron Ch.** La nostalgie du paradis perdu de Tigran Mansurian, “ResMusica », ICMA, Paris, 15 nov., 2017.

³ Տե՛ս **Տիգրան Մանսուրյան**, Խմբերգեր. Խմբագրի կողմից, էջ 4:
~ 575 ~

REFERENCES

Books

1. **Arevshatyan A.** Tigran Mansurian, Yerevan, “Gitutyun”, 2025, 224 p.
2. **Khachatryan A.** Namakani [Letters], compiled by A. Grigoryan, commentaries by A. Shahmanyanyan, Yerevan, 2017, 510 p.
3. **Mansurian T.** Khmberger [Choral works], Preface and editing by A. Avanesov, Yerevan, “Amrots grup”, 2013, 176 p.
4. **Mansurian T.** Menerger [Vocal-Instrumental Works], Yerevan, “Koghb” Foundation, 2024, 232 p.

Journals

6. **Saulneron Ch.** La nostalgie du paradis perdu de Tigran Mansurian, “ResMusica”, ICMA, Paris, 15 nov., 2017.